

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒ. ԳՈԼԴԻՆԳԻ «ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ»:
ԽՐԱՏԱԿԱՆ ԱՌԱԿԸ ՈՐՊԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

ՌՈՒԶԱՆՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Արևմտյան գրաքննադատության մեջ Ու. Գոլդինգի ստեղծագործությունները բնորոշվում են որպես առակ և պարաբոլա, որպես փիլիսոփայական ուղղվածությամբ ստեղծագործություններ: Նրա գրեթե բոլոր վեպերը (այդպես է անվանում հեղինակն իր երկերը, թեև դրանց մեծ մասը ժանրային առումով պատմվածք է հիշեցնում) դիտարկվում են որպես երկպառակային, ֆաբուլային, մյուս մասը՝ փոխաբերական գործեր: Ընդ որում՝ հեղինակային բազմաթիվ գեղարվեստական լուծումների երկիմաստությունը, անսպասելի ավարտները, անկանխատեսելի հնարքները, արձակի բարդ մետաֆորիկ հիմքը հաճախ բացառում են Գոլդինգի ստեղծագործությունների մեկնաբանությունները՝ դրանով հիմք տալով ամենատարբեր, երբեմն էլ իրարամերժ կարծիքների:

Իրականում այն ամենը, ինչի մասին Գոլդինգը գրել է մինչև այժմ, չկրկնվող թեմատիկա է, և, ինչպես վերը նշվեց, հաճախ օգտագործվել են առակներ և փիլիսոփայական առածներ: «Լինել առակագիր (a fabulist), գրում է Գոլդինգը «Առակը» հոդվածում,՝ անշնորհակալ գործ է: Ինչո՞ւ է դա այդպես. բավական պարզ է ու հասկանալի: Առակագիրը նաև բարոյախոս է: Նա չի կարող իր պատմվածքում գրել ինչ-որ բանի մասին՝ միաժամանակ չմերժելով այս կամ այն ուսմունքը... Իր «արհեստի» ծննդյան օրից առակագիրն արդեն ստանձնում է խրատողի, սովորեցնողի դերը»¹:

Ու. Գոլդինգի ստեղծագործական գաղտնիքը այն համառությունն է, որով նա ներկայացնում է բարու և չարի խնդիրը, ձգտելով շոշափել փիլիսոփայական հայտնի պատասխանը, որը կապված է անձի ինքնագիտակցման հետ և առաջադրված է Արևմուտքի «հիվանդ» գիտակցությանը՝ իբրև հետևանք Երկրորդ համաշխարհային պատերազմի:

Իր ստեղծագործություններին նա հաղորդում է այնպիսի դրամատիկ լիցք, դիտողական կառուցվածքները վերածում այնպիսի ճկուն, շոշափելի նյութական կերպարների, որ ստեղծված պատկերներն իրենց վրա են սևեռում նույնիսկ նրանց ուշադրությունը, ովքեր չեն ընդունում հեղինակի որոշ գաղափարներ, առավել ևս՝ վերջնական եզրակացությունները: Նա ստիպում է ընթերցողին մտածել այնպիսի հասկացությունների շուրջ, որոնք նրա ստեղծագործությունների որոշակի գեղարվեստական իրականություն-

¹ William Golding, *Hot Gates*, 1965, p. 85-101.

նից վերաճում են՝ ընդգրկելով ոգու լայնարձակ ոլորտը և ստեղծում մարդկային երևակայության և բանականության ներդաշնակություն:

Գոլդինգի ստեղծագործություններում գազանը հստակ ուրվագիծ չունի. դա մարդկային բնագդակալան, անգիտակցական վախի նյութականացումն է, որը գտնվում է մարդու ենթագիտակցության խոր ծալքերում: Նրա առակների իմաստը ոչ միայն այն է, որ չարը նիրհում է և կարող է արթնանալ մարդու մեջ, այլև այն, որ մարդ ի վիճակի է սանձազերծել արթնացող չարը, մի բան, որ Կաֆկան աղոտ մախազգում էր՝ շնորհիվ իր հիվանդագին գերզգայականության: Այն, ինչ իրականում տեղի ունեցավ, ավելի հրեշավոր էր, քան նրա սյուրռեալիստական տեսիլները, ֆաշիզմի ծնած դժոխքը և Երկրորդ համաշխարհային պատերազմի կատակլիզմները: Համախորտակումը այլ սերնդի գրողի համար դարձավ անձնական և պատմական փորձ, որը և Գոլդինգին օգնեց հասկանալու, որ չարը ճանաչելի է, և մարդը պետք է սահմանափակի դրա ճանապարհը: Եվ եթե գրողի հետ դժվար է համաձայնել չափի զգացողության գնահատման հարցում՝ թե որքան բարություն և չարություն են համատեղ ապրում մարդու հոգու մեջ, ապա դժվար է չարձագանքել նրա՝ չարին հակադրվելու կոչին:

Այդ նույն փորձը հեղինակին հուշեց ձեռնամուխ լինել երկրորդ վեպի ստեղծմանը: «Ժառանգորդները» ("The Inheritors", 1955) վեպը, ինչպես և «Ճանճերի տիրակալը» ("Lord of the Flies", 1954) ծնվեցին բանավեճից և վերաճեցին՝ դառնալով գեղարվեստական և գաղափարական առանձին արժեքներ: Այստեղ բանավեճի առարկան, որի մասին խոսվում է մահ բնաբանում, առաջընթացային զարգացում է ապրում, և, ըստ լիբերալ բուրժուական տեսակետի՝ մարդկության ողջ պատմությունն անընդհատ, ուղիղ գծով շարժում է՝ ցածրագույնից դեպի բարձրագույն ընթացող վերելք, այսինքն՝ պարզունակ կենդանուց մինչև ոգեղենություն: Ու. Գոլդինգը, որ գիտեր մարդկության ճակատագրական մահանջի և նույնիսկ ժամանակի ընթացքի խաթարման մասին, որպես մահ վկա այդպիսի աղետների, չէր կարող համաձայնել նշված տեսակետին:

Մարդկության զարգացման պատմության իր մռայլ ընկալումներում նրա նեանդերթալյան մարդը, լիբերալ գաղափարների լույսի ներքո, հանդես է գալիս որպես էվոլյուցիոն շարքի ամենաքիչ համակրանքի արժանի էակ: «Ժառանգորդները», որը հեղինակը կատակով անվանում է «նախապատմական վեպ»², ոչ թե մարդու հնադարյան մախնիների ջատագովության համար է գրված, այլ նպատակ ունի հիշեցնելու այն մասին, որ առաջընթացի ուղին դիպեկտիկորեն ընդհատվող է. զարգացման ամեն մի նոր փուլ ունի բարոյականության իր կանոնները, իսկ բարոյականությունը մարդու մեջ ամրանում է գոհողության և հսկայական կամքի ուժով: Գոլդինգը նորից անդրադառնում է մարդու «մութ» ակունքներին և ցեղային գիտակցության քննադատությանը:

² St'u Golding W., Some critical considerations. Lexington, 1978, էջ 90:

Պատմության փիլիսոփայական զարգացման մոայլ ընթացքի իր ընկալումը Գոլդինգը ներկայացրեց «Ժառանգորդներ» վեպում, որը հեղինակի գեղարվեստական լավագույն ստեղծագործությունն է:

Հայտնի չէ, թե որտեղից են գալիս, որտեղ են բնակվում նեանդերթալցիները, իսկ նոր մարդիկ խորամանկ են, ազահ, չար ու սարսափելի: Այնտեղ, որտեղ ապրում էին անմեղ, միամիտ նախնադարյան էակները և օգտվում բնության բարիքներից, նորեկները սկսեցին սանձել բնությունը՝ սպանելով կենդանիներին և իրենց նմաններին, ընդ որում՝ ըմբոշխնելով արյան հոտը և տեսքը: Մարդկային կերպի այս ավելի «կատարյալ» ներկայացուցիչները քաղաքակրթության զարգացման ճանապարհին կանգնած էին մի քայլ առաջ: Դա դաժան ծաղր էր՝ ուղղված Homosapiens-ին, և այս ամենը Գոլդինգի մեկնաբանությամբ ավելի շուտ նահանջ էր, մի քայլ հետ՝ չարի ճանապարհով, քան առաջ՝ բարու ճանապարհով: «Նորեկները» ճանապարհից հեռացնում, անողորմաբար ոչնչացնում էին այն ամենը, ինչը խանգարում էր իրենց՝ անասելի հաճույք ստանալով սպանությունից և արյունից:

«Ժառանգորդները» սարսափելի առակ է մարդկային գոյության անիմաստության մասին: Դա մարդկության անուրախ զարգացման մոայլ ապացույցն է: Խավարի այս փիլիսոփայության գեղարվեստական մարմնավորումն իր հավասարը չունի: Գիրքը կարդալիս հնարավոր չէ չսարսռալ: Նեանդերթալցիների կերպարը, հիրավի, հաջողվել է Գոլդինգին. կերտել է անաչառությամբ և յուրօրինակ մարդկայնությամբ: Գրքում նրբորեն և բանաստեղծորեն գծագրվում է մարդու դիմանկարն իր արշալույսին: Գոլդինգը մեծ վարպետությամբ և հարուստ նրբերանգներով պատկերում է բնաշխարհն ու մարդկանց էությունը: Բայց սկսում ես հուզվել և տագնապել, երբ հայտնվում են չսյուանենգ եկվորները՝ բերելով խավար և մահ. բնագոյների ալեկոծում: Նոր մարդիկ, որ եկել էին լճերի և սարերի երկիրը, տարածք, որտեղ մինչև եկվորների հայտնվելն ապրում էին նախնադարյան էակները, լցված էին ատելությամբ ու վախով: Անիմաստ ատելությունը նրանց մղում էր սպանության, իսկ վախը հաճախ դուրս էր ժայթքում՝ պատճառ դառնալով անասելի տառապանքի: Վախը մղում էր նրանց ինքնապաշտպանության, որը հաճախ իրագործվում էր սպանությունների միջոցով:

Առակի սյուժեն ժառանգորդների ձեռքով նեանդերթալցիների մի փոքրիկ համայնքի աստիճանական կործանման պատմությունն է: Քարե դարի մարդկանց, որոնք կանգնած են նյութական և հոգևոր մշակույթի համեմատաբար ավելի բարձր մակարդակի վրա, ոչնչացնում են եկվոր-ժառանգորդները՝ ինքնապաշտպանական բնագոյից մղված: Ժառանգորդների դիցարանում այլանդակ էակներին հատկացվել է դևերի դերակատարությունը: Այստեղ չարի փիլիսոփայական մույն գաղափարն է, որը և «Ճանճերի տիրակալում» է՝ գազանը մենք ինքներս ենք: Այս բանը չգիտակցելու պատճառով են առաջանում մահը և դաժանությունը:

«Ժառանգորդներում» արծարծված բարոյական խնդիրների յուրահատկությանն է անդրադարձել ամերիկացի քննադատ Ռ. Էվանսը.

«Գոլդինգի խնդիրն էր նախաքրիստոնեական պատմությունը վերարտադրել քրիստոնեականին մոտ լեզվով»³: Ջարգացնելով այս միտքը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ հիմք չկա կարծելու, թե նեանդերթալցիների էթիկան ավելի բարձր է եկվորների բարոյականությունից: Պարզապես առաջիններին հասու չէ գիտակցված զգացողության չափի գաղափարը, այլ կա միայն սերունդների կողմից մշակված տաբու: Ուստի ջրի մեջ մտնել և սպանել կենդանի արարածի, նրանք ի վիճակի չեն: Հենց այդ պատճառով վերջիններս մինչև վերջ էլ չեն առնչվում իրենց սպառնացող վտանգին և կործանվում են՝ չկորցնելով սակայն աշխարհի ներդաշնակության զգացումը, որը բնորոշ չէ եկվորներին, որոնք սարսափ են զգում գիշերային անտառից և «դևերից»: Այդ պատճառով անիմաստ է խոսել բարի և համեստ նեանդերթալցիների և չար ու արյունաբերու եկվորների հակադրության մասին: Վերջիններիս կյանքը նույնպես ծանր է ու ողբերգական, քանի որ արդեն մերձեցել են «խավարի աշխարհին» և պետք է պատասխանեն առաջադրված հարցին. ո՞վ է ավելի օժտված, ընդունակ ու ըմբռնող: Տուամին անհամբերությամբ ձեռքում պտտում էր փղոսկրը, որը սրել էր այն մարդու դեմ, ով կփորձեր դա ուղղել խավարի դեմ: Առակի վերջում տրվում է պատասխանը՝ միայն մարդը, քանի որ աշխարհը հենց նա է ժառանգում:

Գոլդինգին հաջողվել է բացահայտել կապկամարդու մտածողության համակարգը: Գրողը գտել է բանալին՝ կարողանալով ներկայացնել պարզունակ մարդու աշխարհընկալման տեսիլքը: Այդ աշխարհը մասնատված է, և յուրաքանչյուր մաս ունի ինքնաբավ գոյության իմաստ: Դա վերաբերում է նույնիսկ սեփական մարմնի մասերին. «Լոկի ոտքերը նույնպես հասկացող են, և նրանք տեսնում են»: Նեանդերթալցու համար Լոկը և նրա հարազատները Լիկայի աղջիկները, Ֆայի կանայք, ծերուկ Մալը, ներդաշնակ իրականություն են, սակայն զուրկ սինկրիտիզմից (միաձուլություն): Կտրատված երևույթների միջև կապը տակավին անհասանելի է. «.....այդ տեղերը և այդ գետը, որ հոսում է անտառում, շատ բարդ են նրանց ընկալման համար»: Նրանք աստիճանաբար սկսում են զգալ մարդկային էությունը, բայց առաջին չեն տարանջատում իրենց բնության մյուս կենդանի արարածներից:

Վեպի պարզունակ հերոսները կանգնած են դրամատիկական ընկալման սահմանին. նրանց մտածողությունը խիստ որոշակի է և տեսական բնույթ ունի: «Ես տեսնում եմ այդպես». նշանակում է՝ «ես այդպես եմ մտածում», իսկ «ես այդպես տեսնում եմ». նշանակում է՝ «ես այդպես չեմ մտածում»: Գոլդինգը ցույց է տալիս, թե ինչպես նեանդերթալցու «զլխի մեջ տանջալից լարվածությամբ ջանում է սողոսկել» մտահանգումը: Խուսափելով կապկամարդու աշխարհընկալումը ժամանակակից դարձնելու գայթակղությունից՝ Գոլդինգը չընկալ մյուս ծայրահեղության մեջ չափազանցնելով պարզունակությունը. Լոկի և նրա հարազատների մեջ արդեն նկատելի է մարդկային հիմքը նրանք հասարակական կենդանիներ են և

³ William Golding: Some critical considerations. Lexington, 1978, p. 92.

ներկայացված են գրքում. «Այն թելերը, որ նրանց կապում են Ֆայի, Մալի, Լիկի և մնացյալ մարդկանց հետ, կյանքի զարդարանքները չեն, այլ դրա իմաստը»: Համայնքի բոլոր անդամների մեջ ընդգծված են մտքի միասնությունը և անմտությունը, ներկայացված են այնպիսի զգացմունքներ, որոնք հատուկ են միայն մարդուն. Ֆան և Լոկը միմյանց հանդեպ «աննկարագրելի» գթասիրտ են: Լոկի «վշտաբեկ ողբի» մեջ զգացվում են մարդկային ցավը և խիղճը: Նախնադարյան պատմության դասից սերող այս բարոյականությունը, որը հեղինակը հրամցնում է ընթերցողին, համահունչ է նրա այլ առակների բարոյախոսությանը. մարդը պետք է ճանաչի, սովորի կառավարել ինքն իրեն: «Գազանին» հնազանդեցնելու ճանապարհներից մեկը գրողը տեսնում է մարդու մեջ առկա ստեղծագործական սկզբի բարենորոգող ուժի մեջ: Վեպի վերջում Տուամին անորոշ կերպով զգում է, որ թրի կոթը, եթե զարդարես, ցույց կտա կյանքի հագեցվածությունը և իմաստությունը: Վերջին հաշվով՝ դրանք շատ ավելի կարևոր են, քան հենց թուրը:

Վերջում Գոլդինգը ցույց է տալիս, որ այդ ճանապարհը մույնպես չի փրկում չարից, և որ ստեղծագործական սկիզբը ոչ միշտ է տանում դեպի բարին:

Գոլդինգը ավելի վաղ գրել է ևս երկու առակ այդ մույն թեմայով՝ մարդու մեջ չարի և այդ չարի համար պատասխանատվություն կրողի մասին. «Գող Մարտինը» (1956 թ.), «Ազատ անկումը» (1959 թ.):

Մարդուն ի սկզբանե հատուկ «նախածին չարի ըմբռնումը» Գոլդինգին մոտեցնում է մոդեռնիստներին, սակայն վերջիններից նա տարբերվում է երկու կարևոր հանգամանքով. ամեն կերպ չարին հակադրվելու պահանջը և դրա հանդես գալու ձևերի դիտարկումը սոցիալ-պատմական ենթատեքստում, այսինքն՝ այն պայմաններում, որոնք նպաստում են դրա ակտիվացմանը: Գոլդինգի ստեղծագործությունն առաջացնում է սազմապ, անհանգստություն, մարդուն բարոյապես ցնցում և ստիպում է մտածել, քանի որ զգայական հավասարակշռության խախտումը հաճախ աշխատեցնում է ուղեղը:

Այն համառությունը, որով գրողը նորից ու նորից դիմում է խղճի ցավոտ հարցերին, խոսում է այն մասին, որ նա չի ուզում ընդմիշտ կամ վերջնականապես հանգցնել մարդկայնության կրակը, որը հազվադեպ դուրս է սողոսկում «աշխարհի խավարից», որի մեջ ընկղմված են նրա կերտած կերպարները: Այս ամենով հանդերձ՝ Գոլդինգի ստեղծագործությունները չեն հարուցում խոր հոռետեսություն:

«Հատկապես գրքերը, ասել է նա Նոբելյան մրցանակ ստանալիս, կարող են ստիպել մարդուն մտածել այնպիսի իրավիճակների ստեղծման անհրաժեշտության մասին, երբ աշխարհում կերաշխավորվի թեկուզ հարաբերական խաղաղություն, և մարդիկ ավելի լռորեն կմտածեն կյանքի ու դրա իմաստի մասին, կանդադադառնան իրենց արարքներին: Նրանք պետք է հասկանան, թե ինչպիսի չարագուշակ հետևանքի կարող են հանգեցնել սանձազերծված ենթագիտակցական բնագոյները, օրինակ՝ չարը: Մեր անգիտության մեջ, կրկնում են, մենք պետք է լինենք բարի և մարդկային»:

РУЗАННА ЕГИАЗАРЯН – „Наследники” наставническая басня У. Голдинга как основа произведения.- Книга „Наследники” ужасная басня о бессмысленности существования человечества.

Это свидетельство о грустной эволюции людей.

Философское олицетворение темы по своей художественной силе не имеет себе равных.

В истории развития человечества, в его мрачных восприятиях жизни неандертальский человек под влиянием либеральных идей представляется как пример эволюционного развития, достойный наименьшего поклонения. Как в шутку называет его Голдинг это „доисторический роман”, который написан не как апология древнего человека, а напоминает о том, что диалектический процесс прерывен, и каждый новый этап прогресса имеет свой моральный спад, а она, мораль человека, как бы проявляется ценой больших усилий и жертв. Голдинг вновь обращается к темным истокам и к критике родового сознания людей.

RUZANNA YEGHIAZARYAN – *W. Golding's preceptorial fable „Heirs” as a basis for creation.-* The book “Heirs” is a terrible fable about the absurdity of mankind's existence.

It is a witness of the sad evolution of humanity. The philosophical personification of the topic according to its literary force is incomparable.

During the history of mankind development, in its morose perceptions, this Neanderthal man, while being under the influence of liberal ideas, is represented as an example of evolutionary development, which is worth of being less worshipped, as Golding calls it in a humorous way, “a prehistoric novel”, which is not only written as an apology of the ancient man, but reminds that the dialectical process is interrupted, and each and every new period of progress has its own moral slump, and the person's morale showed itself through the great efforts and sacrifices.

Golding once again turns to the dark sources and to the criticism of the people's generic conscience.